ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 3281-Ա «18» օգոստոսի 2025թ.

ԿՈՎԿԱՍՅԱՆ ՓՈՂՈՑԻ Հ.21/2 ՀԱՍՑԵՈՒՄ «ՎԻՋԻ-Ս» ՍՊԸ-ԻՆ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ՏԱՐԱԾՔԸ ԵՆԹԱՎԱՐՁԱԿԱԼՈՒԹՅԱՆ ՏԱԼՈՒ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Վարչական ակտի ընդունման համար հիմք է հանդիսացել «Վիջի-Ս» ՍՊԸ-ի լ/ա Ռաֆիկ Ազատյանի դիմումը՝ Կովկասյան փողոցի հ.21/2 հասցեում, «Վիջի-Ս» ՍՊԸ-ին վարձակալության իրավունքով տրամադրված 607.79քմ մակերեսով տարածքը /անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման հ.18122024-01-0042 վկայական/ ենթավարձակալության տալու թույլտվության մասին:

Երևանի քաղաքապետի 2008 թվականի մայիսի 15-ի հ.2221-Ա որոշմամբ՝ Դավթաշենի կամրջի հարևանությամբ գտնվող, Արաբկիր համայնքի մուտքի կողմից ձախակողմյան բացվածքի ազատ և ոչ հարդարված տարածքի 607.79քմ մակերեսով տարածքը վարձակալության իրավունքով, 25 տարի ժամկետով տրամադրվել է «ՎԱՎԱՆ» ՍՊԸ-ին: Նշված որոշման հիման վրա 2008 թվականի սեպտեմբերի 27-ին «ՎԱՎԱՆ» ՍՊԸ-ի հետ կնքվել է ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագիր /հետագայում՝ 12.08.2024թ. անշարժ գույքի առուվաճառքի պայմանագրով «Վիջի-Ս» ՍՊԸ-ին օտարվել է վերը նշված անշարժ գույքի վարձակալության իրավունքը/:

Հաշվի առնելով ոչ բնակելի տարածքի վարձակալության պայմանագրի 2.4 կետի 2.4.6 ենթակետը, ղեկավարվելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 49-րդ հոդվածով, «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» օրենքի 3-րդ, 53-րդ, 59-րդ և 60-րդ հոդվածներով, Հայաստանի Հանրապետության քաղաքացիական օրենսգրքի 620-րդ հոդվածով և Երևան քաղաքի ավագանու 2024 թվականի դեկտեմբերի 24-ի N 259-Ն որոշման հավելվածով.

1. Թույլատրել «Վիջի-Ս» ՍՊԸ-ին՝ Կովկասյան փողոցի հ.21/2 հասցեում գտնվող 607.79քմ մակերեսով տարածքը տալ ենթավարձակալության:

2.Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան՝ դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի անշարժ գույքի կառավարման վարչության պետի վրա:

4. Սույն որոշման կատարման ընթացքի նկատմամբ հսկողությունն ապահովում է Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի քարտուղարը:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ